

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ ՈՒՍԱՅԻՍ.



ՈՒՍԱ, քաղցր աստուածութիւն,
 Քանի դեռ շունչըս վերջին
 Ձի հանգած եթերում,
 Ինչպէս պղտոր կոհակի դանդաղ շառաշիւն.
 Քանի դեռ ճակատիս գոս դափնիններն
 Հողի գիրկը չեն ընկած.
 Քանի դեռ ինձ կիզող ցաւն
 Արշալոյսիս վարդերը չի խամրած, —
 Ո՛հ, երգուեցնեմ եմ քեզ,
 Մի անգամ ևս ամպերից իջի՛ր՝
 Դրոշմելու գէթ մի համբոյր տփռոյն ճակատիս:

Ո՛վ դու սրտիս թագուհի,
 Աշխարհիս բիրտ շրթներն ինձ ասացին,
 Որ քեզ ուրանամ և սիրած քնարս կրակը ձգեմ.
 Ինձ ասացին, որ դէն ձգեմ դափնիքս ու ոսկէ պսակ որոնեմ.
 Ինձ ասացին. «Ի՞նչ լոյս է որ
 Ներշնչում ես անուանում.»
 Ինձ ասացին. «Ի՞նչ է դափնին»,
 Որով դէմքդ ես պսակում:
 Շուտ կը հանգի այդ լոյսը,
 Ձմրան շունչը դափնիներդ կը չորցնէ.
 Իսկ Մուսադ՝ ամպեղէն աստուածութիւն է ունայն,
 Որ պահ մի քեզ կը սիրէ,
 Կը ժպտի ու կրկին կը հեռանայ:
 Ի՞նչ ես, նրա սիրուն, անհուն նայուածքդ յառել վեր.
 Յաճ նայիր և կը գտնես երկրի ոսկին,

Որ քամիները ուժգին
 Երբեք չեն տապալիլ,
 Ոչ էլ կրակը կարող է այլայլել:
 Դիոսի որդին է նա.
 Նա է միակ կալուածն հաստատուն:

Աւաղ, ցնցում է ինձ այս ձայնը
 Զերդ դառն շունչն հիւսիսի,
 Կամ ինչպէս ծանր ժխոր
 Մրրկածին ալիքներից ժայռերին:
 Հեծում է սիրտս տխուր,
 Կայլակում աչքս արտասուք,
 Եւ հոգիս կսկծում... ասում եմ—[Թող Մուսայիդ:

Թող ասեն, [Թող ասեն մեղուին, որ ծաղիկները [թողնէ,
 Արեւադիկն—ուրանայ լոյսի ճաճանչը անոյշ,
 Ե [թերաբնակ արծըւին—ամպերն արծաթ-ոսկեղէն,
 Սոխակին—պուրակի սաղար[թախիտ հովանին,
 Զինուորին—իր սուրը,
 Բեւեռի աստղն էլ՝ նաւաստուն:
 Եթէ երբեք մեղուն [թողնէ
 Իր ծաղիկներն ու [թռչի
 Քարերի մէջ պտրել մեղր,
 Արեւածղիկն էլ շուռ տայ
 Իր քնքոյշ երեսը
 Կենդանարար լոյսից դէպի հող,
 Կամ սոխակը լքանէ
 Ստուերը իր պուրակի,
 Կամ մարտիկը դէն ձգէ սուրն
 Եւ, վերջապէս, նաւաստին
 Անհոգաբար հրաժարի
 Ոսկի աստղից բեւեռի,—
 Ես էլ քեզ, անգի՜ն Մ ւսաս,

Ես էլ քեզ, թագուհիս,
 Ես էլ քեզ, ո՛վ հոգւոյս աստուածութիւնդ անձկալի,
 Քեզ կը թողնեմ:
 Քնարըս կը նետեմ կրակի մէջ բոցավառ
 Եւ դափնիս քաղցրաբոյր՝
 Կը ձգեմ ծով, որ ալիքները տանին...:
 Վա՛յ ինձ... Թէ պահ մի
 Վարանեց միտքըս—Մոռսա, մեղա՛յ քեզ,
 Մինչ ցաւի ու դողի
 Յոյզերն էին պատել ինձ:
 Սակայն սիրտս հաւատարիմ՝
 Ինձ բւեռել է սիրուդ:
 Երբեք, երբեք չեմ տատանիլ,
 Երբեք չեմ փակիլ ահանջս:
 Ո՛չ, Մոռսա, խո՛ր է, շատ խոր,
 Աստուածային սէրդ իմ մէջ,
 Եւ մըրկի անզօր է շունչն,
 Անզօր է ծո՛լը անդամ՝
 Մարելու այն բոցն անոյշ,
 Որ հոգուս ներսն է վառուած:

Բայց երբեք չսիրեցի,
 Երգւում եմ քեզ, ո՛վ Մուսա,
 Մուսայապաշտ երգչի փառքը՝
 Այս աշխարհում նախանձելի:
 Այդ փառքը երազն է
 Ոչ թէ հոգու վշտահար,
 Այլ զուարթ, երջանիկ և ծիծաղուն սրտերի:
 Մինչ իմ դալուկ ու մեռած
 Եւ անապատ այս կեանքում,
 Ուր խինդերը սակաւ են,
 Ուր սակաւ են յոյզերը,
 Միակ աստղըս դո՛ւ եղար,
 Եւ բարախուն իմ կրծքի

Ողջ սէրն հոսեց զէպի քեզ:—
 Քեզ սիրեցի, ոչ թէ փառք—
 Քեզ որպէս աստուղ, որպէս ծաղիկ, որպէս երգ,
 Աստուածային որպէս զեղ,
 Քեզ որպէս երկնի լոյսի ճաճանչ
 Ոսկեղէն և զեղեցիկ,
 Քեզ պատանութեանս որպէս երազ,
 Քեզ որպէս բերկրանքը կեանքիս,
 Քեզ որպէս յոյս, վերջիշում,
 Քեզ, ամէն տեղ քեզ, ու միայն քեզ:

Ոհ, երբ քնարս էլ մի օր
 Կրճքիս սեղմած ջերմագին,
 Եւ դոս զափնին ճակատիս՝
 Անշնչացած վէր բնկնիմ,
 Այն ժամանակ թող, ո՞վ Մուսա,
 Շիրմիս զլինին բողբոջող
 Ուռու վրայ լուռ գիշերին
 Մենասէր թռչնակը հեծէ,
 Հեծէ անոյշ և որքան քեզ սիրելը՝ ողբերգէ,
 Մինչ մենաւոր, դալկադէմ
 Լուսնակն ամպերի ծոցից
 Լուռ մի ականարկ ձգէ ցած
 Մելամաղձիկ և անոյշ . . . :

Հեղ. Տիկ. Կ. ՊՐԷՎԼԶՆՈՏԻՍ

Թարգմ. յունարէնից՝

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱԶՍՈՒԴԵԱՆՅ

